ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2021 թվականի N 377-Ա

ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2.1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցի լիազորությունների ժամկետը 2021 թվականի սեպտեմբերի 23-ին ավարտվելու կապակցությամբ, հիմք ընդունելով Դավիթ Ղուլունցի անձնական դիմումը,

որոշում եմ.

1. Դավիթ Ղուլունցին 2021 թվականի սեպտեմբերի 24-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով նորընտիր համայնքի ղեկավարի լիազորությունների ստանձնումը:
2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ ընդունել ի գիտություն, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի՝ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնավարման ընթացքում չեն կարող կատարվել աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կառուցվածքային և հաստիքացուցակի փոփոխություններ:

22.09.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ **Մ.ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 22